Doi: 10.56737/2953-7843-2025.10-110

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՎԻԿՏՈՐ ԳԱՐԴՈՆԻ «ԶՄՐՈՒԽՏԱՎԱՌ ԱՍՊԵՏԸ» ՎԵՊՈՒՄ[1]

Հերոսությունն սկսվում է լոկ այն ժամանակ, երբ հաղթահարված է մի որոշ ծանրություն, երբ մարդը պահանջում է իրենից ավելի, քան հարմար էր իր անդորրին

(Անդրե Ժիդ)[2]*։*

Սույն հոդվածը «Թուրքի կերպարը Վիկտոր Գարդոնի «Զմրուխտավառ ասպետը» վեպում»[3] հոդվածի շարունակությունն է, որը նպատակ ունի ամբողջացնելու թուրքի կերպարի գարդոնյան ընկալումը, Վանի ինքնապաշտպանական մարտերը եւ Վանի անկումը։

Հոդվածում դիտարկվում են թուրքական դիվանագիտության առանձնահատկությունները, միջին վիճակագրական թուրքի բնավորության գծերը, նրա ստորությունն ու անմարդկային էությունը։

Ի հակադրություն սրան՝ ուրվագծվում են վանեցիների՝ բնիկ հայերի առաքինությունները, նրանց հավատարմությունը, ավանդապահությունը, անձնազոհ պայքարը՝ ինքնության պահպանման ու հարազատների պաշտպանության համար։

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ուսման հանդեպ հայերի վերաբերմունքը, դրա արժեւորումը եւ անգամ ամենածանր ու անհուսալի իրավիճակում երեխաների կրթության մասին հոգալու վարքագիծը։

Վիկտոր Գարդոնը՝ ֆրանսահայ գրող Վահրամ Կաքավյանը, բնիկ վանեցի է, որ իբրեւ ականատեսի աչքերով նկարագրում է Վանի ինքնապաշտպանական մարտերը։

---

[1]* *Ստացվել է՝ 8.08.2025, գրախոսվել է՝ 9.09.2025։ էլ. հասցե՝* santryan83@mail.ru:

[2] *Տե՛ս* Վ. Գարդոն, *Զմրուխտավառ ասպետը, Եր., «Խորհրդային գրող» հրատ., 1990, էջ 430։ Այսուհետ այս գրքից կատարված մեջբերումները կտրվեն շարադրանքին կից՝ փակագծերում նշելով ՎԳ եւ էջը։*

[3] *Տե՛ս* Լ. Սանթրյան, *«Մեզ նվազ ծանոթ, աշխարհին քաջահայտ (անդրադարձ «Զմրուխտավառ ասպետը» վեպին), «Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՁԲ. տարի, 2025, Զ., 131–145։*

Նախորդիվ ներկայացվել են սուլթանների վարած քաղաքականությունը, երիտթուրքերի հեղափոխությունից հետո ստեղծված իրավիճակը, ազատության, հավասարության, եղբայրության մեղրածոր պատրանքները, վեպի գլխավոր հերոս պատանի Վահրամի տատի՝ Մեծ մամի սթափության մղող խրատները, Վահրամի հոր՝ Հարությունի՝ թուրքական իշխանություններից հիասթափությունը, Էնվերի խորամանկ սիրալիրությունը եւ Թալեաթի անթաքույց ատելությունն ու արհամարհանքը։

Այստեղ կշարունակենք վեպի սյուժետային ընթացքին համահունչ թուրքական դիվանագիտության ու վայրագ էության բացահայտումը եւ հայերի ինքնապաշտպանության կարեւորումը։

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ տեղի ունեցած իրադարձությունների կրկնվելու միտումով, որոշ հայերի՝ թուրքի հանդեպ անվերապահ վստահությամբ եւ սթափեցման, զգաստության ու արթնության ակնկալիքով։ Մեծ մամի խիստ արդիական խրատներն ամբողջությամբ մեջբերել ենք՝ ընթերցող լայն զանգվածներին դրանք հասանելի դարձնելու նպատակով եւ խնդիր դրել հայերին հիշեցնելու թուրքի ով լինելը, թարմացնելու քնած հիշողությունը եւ վառելու պայքարի ոգին՝ ոգեկոչելով Վանի ինքնապաշտպաններին։

Դարեր շարունակ թուրքական քաղաքականությունն ուղղված էր հայերի թվաքանակի կրճատմանն ու իրենց աճին։ Սրան հասնում էին թե՛ կոտորածների, թե՛ բռնի ձուլման միջոցով։ ԺԴ. դարում ենիչերիների զորաբանակը համալրվում էր միայն քրիստոնյա, մեծ մասամբ հայ երեխաներով, որոնց հափշտակում էին բռնությամբ ու դաստիարակում որպես մոլեռանդ մահմեդականներ՝ զինվորական դպրոց-մարզարաններում։ Ստրուկ զինվորներ էին դրանք։ Մահմեդականները որպես ազատ մարդիկ, այդ դպրոցներում չէին ներգրավվում։ Բայց ԺԷ. դարում մահմեդականները կարողացան մուտք գործել այնտեղ, եւ զորաբանակը դարձավ անկարգապահ, խռովարար ու գիշատիչ մի ոհմակ (ՎԳ, 368)։ Հենց այդ գիշատիչների ու վայրենի քրդերի ձեռքով էլ իրականացվում էին ջարդերը։

Ի տարբերություն հայերի՝ քրդերն ավելի լավ էին ընկալել թուրքի ոգին եւ ծիծաղում էին հայերի՝ «ազատության» հանդեպ միամիտ հավատի վրա։ «Սուլթանը սեւ հովազ էր, իսկ այս երիտասարդ թուրքերը շնագայլերի ոհմակ են։ Հարությունին կասես, որ երիտասարդ թուրքերը շարունակելով զինել մեզ՝ չեն թաքցնում, որ ավելի լավ է հայերը լինեն

ջեններթում (արքայությունում)»,– Մեծ մամի ծառա Սարգսին հայտնում է քուրդ ցեղապետ Բաշ աղան (ՎԳ, 304)։

Իսկ թուրքերի ատամները սրել էին եւրոպական երկրները։

Երբ Սելիմ բեյը Մեծ մամի հետ խոսում է համաշխարհային մոտալուտ պատերազմի մասին, եւ վերջինս շեշտում է, որ պատերազմից ոչ ոք չի շահում, Սելիմ բեյը հերքում է.

– Բայց այս անգամ մենք կհաղթենք, որովհետեւ ունենք մի հզոր զինակից... Իսկ հայերը պետք է կռվեն առյուծի պես։

Մեծ մամը պատասխանում է.

– Դուք շատ լավ գիտեք, գնդապե՛տ բեյ, որ հայերը ենթարկվում են աստծուն եւ իրենց պարտականությանը։

– Այդպես էլ պետք է շարունակեն, Մեծ խաթուն, պետք է գոհ լինեն իրենց ճակատագրից ու այլեւս չմտածեն բարենորոգումների մասին։ Ինչո՞ւ երկու օտարերկրացի անհավատ[4] պիտի գան հրամաններ տալու մեզ հայերի ինչ-որ պատմության պատճառով։ Կարելի՞ է միթե պատկերացնել, որ այդ հոլանդացի Հոֆը՝ այդ անհավատ շան լակոտը, դողացնի ինձ՝ ժանդարմերիայի պետիս, նրա համար, որ քրդերն սպանել են ինչ-որ Զաքարի կամ գյուղացու։ Այդպիսի բան երբեք չի տեսնված։ Արդյոք դա մի քանի տաքգլուխ հայերի սխալից չէ՞։ Արդարեւ, Հարություն էֆենդի, ես իմացել եմ, որ դաշնակները մարտական հրացաններ են ներմուծում Վան ու զինում հայերին։ Սա արդեն ծայր աստիճանն է (ՎԳ, 368–369)։

Իսկ Մեծ մամի այն հարցին, թե ինչո՞ւ է Սելիմ բեյը վստահ իրենց հաղթանակի հարցում, վերջինս պատասխանում է.

– Հիմա Գերմանիայի հզոր կայսրը մեզ հետ է ընթանում՝ ձեռք ձեռքի։ Ռոպեապես կգրավենք Բաքուն։ Իր նավթից զրկված Ռուսաստանը կոչնչացվի։ Ցարը կճխլվի Գերմանիայի ու Թուրքիայի կազմած աքցանի մեջ։ Հետո արդեն մենք կզբաղվենք ֆրանսիացիներով, այնուհետեւ հերթը կհասնի անգլիացիներին։ Երբ թուրքերն ու գերմանացիները հաղթանակ տանեն, ալլահը կընտրի ամենահզորին՝ աշխարհին իշխելու համար (ՎԳ, 371)։

---

[4] *1914 թ. ռուս-թուրքական պայմանագրով Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրի իրականացումը վերահսկելու համար Արեւմտյան Հայաստանը բաժանվում է երկու սեկտորի (շրջանի)՝ Հյուսիսային, որի տեսուչ է նշանակվում հոլանդացի Լ. Վեսթենենկը, եւ Հարավային, որի տեսուչը նորվեգացի Հոֆն էր (*Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լ.ՍԻՄՈՆՅԱՆ, Ա.ԲԱԼԱՅԱՆ, *Ն. Հոֆի գործունեությունը Վանում,* test.journal.sci.am/index.php/banber-ysu-armen.article/view/*927/762 (մուտք՝ 10.05.2023)։*

Ահա որքան «վստահելի» է Թուրքի դաշնակցությունը եւ անխոտոր՝ ուրիշների ձեռքով սեփական հարցերը լուծելու քաղաքականությունը։

Թուրք իշխանավորներին սիրաշահելու եւ ժողովրդին կոտորածից փրկելու համար մի շարք հայ կուսակցականներ, այդ թվում եւ արմենականների գլխավոր Հարությունը որոշում են կամավորագրվել թուրքական բանակին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Ու երբ Սելիմ բեյի կասկածները փարատելու եւ իրենց հավատարմությունը հավաստելու համար հիշեցնում են, որ թուրքական բանակի գերագույն սպային՝ էնվերին փրկողը ոմն հայ Հովհաննես չաուշ էր, Սելիմ բեյն ասում է.

– Անշուշտ, բայց դուք ցանկանում եք փոխել ձեր վիճակը։

– Ոչ, Սելիմ բե՛յ, մենք ուզում ենք ունենալ մարդկային վիճակ։

– Այո՛, բայց դրա պատճառով Եւրոպան միջամտում է մեր ներքին գործերին (նկատի ունի Հոֆի եւ Վեսթենենկի ներկայությունը – Լ. Ս.)։ Ինչո՞ւ եք ուզում թուրքերի վիճակն իջնի, որպեսզի ձերը բարձրանա։

– Մենք ուզում ենք միայն ապրել ու աշխատել ապահով վիճակում. ինչպե՞ս սա կվնասի թուրքերին։

– Այս երկրում կամ քրիստոնյան կմնա մուսուլմանի ծառայության մեջ, կամ նրա համար տեղ չկա (ՎԳ, 395–396)։

Ահա սա է թուրքի հանդուրժողականությունը. հայ քրիստոնյան կամ կլինի ստրուկի կարգավիճակում, կամ չի լինի, եւ գլխացավանքից ազատվելու եւ հայկական հարցը մեկընդմիշտ փակելու համար թուրք իշխանությունն ընտրում է երկրորդ տարբերակը։

Երբ վանեցիների դասակն ուղարկում են իբր խրամատներ փորելու, թուրքերը գնդացիրներն ու հրացաններն ուղղում են նրանց կողմն ու կոտորում բոլորին, նույնիսկ վիրավորներին, որ ոչ ոք չփրկվի։ Թուրք զինվորների երկխոսությունը բացահայտում է նրանց անմարդկային հոգիները։

– Այս վանեցիների հաշիվը մաքրեցինք շատ շուտ, ինչպես նապաստակների։

– Այնքան էլ յաման չեն, ինչպես ասում էին։

– Մա՜հ անհավատ շներին,– գոռաց մի բիրտ ձայն։

– Նայեք մարմինները. ոչ մեկը չպետք է խույս տա։ Վերջ տվեք մահացողներին (ՎԳ, 411)։

Էնվերի փեսա Ջեւդեթ բեյը, որ հայ գյուղացիներին պայտելու համար Ջեւդեթ Պայտար անունն էր ստացել եւ հայտնի էր իր անմարդկային կերպարով, Վանից զորակոչված 3000 հայերին նախ զինաթափել, օգտագոր-

ծել էր հողային աշխատանքների, խրամատներ փորելու համար, ապա գնդակահարել։ Վերադառնալով Վան՝ նա պահանջում է իրեն հանձնել 3000 «դասալիքներին», այլապես «քարը քարի վրա չի թողնի»։

– Իհարկե,– ասաց Հարությունը տխուր ձայնով,– իսկական մոնղոլի հաշիվ. զինաթափել քրիստոնյա զինվորներին, օգտագործել հողային աշխատանքների համար, ապա դավաճանաբար կոտորել, հետո էլ պահանջել նրանց որպես դասալիքների... Այս դիվային նենգությունը ավելի է սարսափեցնում ինձ, քան մյուս բոլորը (ՎԳ, 416)։

Կեղծարարությունը թուրքի ձեռագրի անբաժան մասն է, ինչը տեսանելի էր Արեւմտյան Հայաստանում, հետագայում՝ Նախիջեւանում, իսկ այսօր արդեն նաեւ Արցախի բռնազավթված տարածքներում ադրբեջանցիների վարած քաղաքականության մեջ[5]։

Վանեցիները հաստատում են. «Ջեւդեթ բեյը զինում է Վանի թուրք բնակիչներին ու խոստանում նրանց հայերի ունեցվածքը։ Վերադառնալուց հետո տասներկու հազար հրացան է բաժանել նրանց» (ՎԳ, 416)։

Ծեր ուսուցիչ Հովհաննեսը Հարությունին պատմում է, թե ինչպես է ականավոր մարդկանցից, կրոնական քարոզիչներից, Վանից ընտրված հայ պատգամավոր Վռամյանից ու իրենից բաղկացած պատվիրակությունը գնացել Ջեւդեթի մոտ, եւ ինչպես է նա սպառնացել «կոտորել մինչեւ վերջին ծծկեր երեխան, եթե երեք հազար դասալիքներին չհանձնենք իրեն։ Վռամյանը խնդրեց դրանց ցուցակը։ Կուսակալ բեյը պատասխանեց շանթ ու կայծակ նետելով, թե այդ ցուցակը կկազմի՝ փախստականների դիակները շարելով Վանի ավերակների վրա» (ՎԳ, 719)։

Եւ երբ ամերիկյան, շվեյցարական ու գերմանական քարոզիչները՝ պատվիրակության անդամները փորձում են մեղմել Ջեւդեթի ցասումը, նա ազդարարում է, թե մտադիր է հիսուն զինվոր տեղավորել յուրաքանչյուր միսիայում՝ նրանց պաշտպանելու համար։

– Թույլ չպիտի տանք,– ասաց Հարությունը։– Համուդ փաշայի զորանոցի գրավումն ինքնին դաշույն է՝ ցցված մեր պաշտպանության սրտին։

---

[5] *Տե՛ս* Հ. Պետրոսյան, Հ. Մուրադյան, *Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Եր., 2022, ինչպես նաեւ՝ Մարդու իրավունքների խախտումներն արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, Փաստահավաք զեկույց, Եր., 2022,* https://www.osf.am/wp-content/uploads/*2022/08*/Fact-Finding-Report_Final_ARM_WEB.pdf *(մուտք՝ 12.06.2023)։ 3.* The Endangered Christian Armenian Heritage of Artsakh, youtube.com/watch?v=gAanoW*55*Kek *(մուտք՝ 12.06.2023)։*

Հենց որ միսիոներական տները գրավվեն, եւ հարյուր հիսուն թուրք դիրք բռնեն քաղաքի ամենաբարձր շենքերի տանիքներին, ո՛չ մի դիմադրություն չենք կարող ցույց տալ։

Ջեւդեթի առաջարկին ի պատասխան ամերիկացի միսիոներ դոկտոր Ըշըրը հավաստիացնում է, որ միսիոներներն ամենեւին սպառնալիքի ենթակա չեն եւ ավելորդ են համարում այդ պաշտպանությունը։ Իսկ եթե կուսակալն իր պահակախմբերին ուղարկի, իրենք կընդունեն նրանց՝ թոթափելով ամեն պատասխանատվություն այն դեպքում, եթե դրանց դժբախտություն պատահի։

Դրա վրա կուսակալը, ասես օձից խայթված, շրջվեց դեպի Վռամյանը.

– Այդ դո՞ւք եք, որ պիտի սպառնաք իմ պահակազորին,– հարցրեց նա (ՎԳ, 420)։

Իսկ այդ զինվոր կոչվածները չեթեներ էին՝ քրեական հանցագործներ, բանտից ազատ արձակված ավազակներ։

Ջեւդեթ բեյը հիշեցնում է, որ Շատախի հայերն ըմբոստացել են, սպանել զգալի թվով քրդերի ու ժանդարմների։ Սրան ի պատասխան հայերը փաստում են, որ դրա պատասխանատուն Շատախի գավառապետն էր, որ սպանել է տվել դպրոցի տնօրենին եւ ձերբակալել բազմաթիվ ականավոր անձանց։ Բացի դրանից՝ նա զինել եւ ուղարկել է քրդերին՝ կոտորելու հայ բնակչությանը։ Որպես «փոխըմբռնման» դրսեւորում՝ Ջեւդեթն առաջարկում է Շատախ ուղարկել ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Իշխանին։

– Հիանալի է,– ասաց կուսակալը՝ ոտքի ելնելով։– Եթե Իշխանը վերահաստատի խաղաղությունը եւ ապացուցի ինձ գավառապետի հանցավոր լինելը, ես խոստանում եմ կախել տալ նրան (ՎԳ, 421)։

Իշխանին Շատախ ուղարկելը ինքնապաշտպանության գլխատում էր նշանակում եւ հայերը խորհում են մեկ ուրիշին ուղարկելու մասին։

Իշխանը համաձայնում է մեկնել Շատախ, բայց ճանապարհին նրան եւ նրա ուղեկիցներին սպանում են Ջեւդեթի ուղարկած չեթեները, իսկ պատգամավոր Վռամյանը, հրավիրվելով Ջեւդեթի մոտ, ձերբակալվում է։

Երբ հայ պատվիրակությունը օտարերկրյա հյուպատոսների հետ այցելում է կուսակալ Ջեւդեթին եւ անհանգստություն հայտնում Իշխանի սպանության ու Վռամյանի ձերբակալության առիթով, Ջեւդեթը հայտարարում է.

– Ես ուղարկեցի իմ զինվորներին՝ հանձնելու համար Իշխանին իմ հրա-

մանը, որով նրան կանչում էի ինձ մոտ։ Եթե նա դիմադրել է, հնարավոր է, որ սպանել են նրան։ Իսկ ինչ վերաբերում է Վռամյանին, ապա հրաման եմ ստացել ուղարկել նրան Կոստանդնուպոլիս։ Գալով Վանի շրջափակմանը, ապա դա կատակ էր։ Դրա ապացույցն այն է, որ ես ցանկանում եմ տեսնել Արամին, որը վայելում է իմ ամբողջ հարգանքը։ Ուզում եմ խորհրդակցել նրա հետ, որպեսզի վերջապես դասալիքների հարցի խնդրի լուծումը գտնենք (ՎԳ, 429–430)։

Իրականում «կատակասեր» կուսակալի հրամանով Իշխանին ու նրա ուղեկիցներին սպանել էին ոչ թե դիմադրության ժամանակ, այլ երբ նրանք հանգրվանել էին Իշխանի անձնական բարեկամ քուրդ ցեղապետ Քյարիմ Ռաշիդի մոտ։ Ջեթեները ներխուժել էին սենյակ ու շեշտակի կրակով սպանել նրանց։ Իսկ Արամը, որը կանչվել էր Ջեւդեթի մոտ, հանդիպելով Վռամյանի ձերբակալությանն ականատես կառապանին եւ իմանալով եղելությունը, խուսափել էր հանդիպումից։

Պատվիրակները հեռանում են կուսակալի պալատից։ Նորաշենի հրապարակում բազմությունը շրջապատում է նրանց կառքը։ Դոկտոր Ըշըրը՝ մարդկային բոլոր ցավերին կարեկից այդ բարեսիրտ ամերիկացի միսիոնները, հանկարծ կանգնում է կառքի մեջ եւ տասը տարի Վանում ապրելուց ու աշխատելուց հետո առաջին անգամ հայերեն դիմում է բազմությանը.

– Բարեկամնե՛ր, իմ խե՛ղճ բարեկամներ,– ասում է նա,– ես կարծում եմ, թե ձեզ մնում է միայն մի բան՝ պաշտպանել ձեր կյանքը... Այլեւս ո՛չ մի հույս չկա... Մենք ոչինչ չենք կարող, ոչի՛նչ։ Կասկածից դուրս է, որ դուք ունեք միայն մի պարտավորություն՝ պաշտպանել մարդկային ձեր արժանապատվությունը... Հաջողությո՛ւն ձեզ (ՎԳ, 430)։

Այս ամենից հետո ինքնապաշտպանությանն այլընտրանք չի մնում, եւ հենց դա էլ փրկում է հազարավոր հայերի կյանքը։

Թուրքերն ամեն կերպ փորձում են խանգարել ու թուլացնել դիմադրությունը։ Դրա համար դիմում են ամենաստոր ու անմարդկային միջոցներին։ Նրանք կողոպտում էին հայկական գյուղերը՝ նվազեցնելով պարենի պաշարները։ Դա սովամահության վտանգ էր ստեղծում։ Սակայն դրանից բացի կար մի նոր ու ահեղ վտանգ. «Երկու օր էր, թուրքերը կիրառում են դժոխային ռազմավարություն. կողոպտում են գյուղավայրերի հայերին, ասորիներին ու հրեաներին ու սովահար քշում քաղաք (Վան – Լ. Ս.)։ Մենք չենք կարող հետ մղել նրանց, որովհետեւ թուրքերը կրակում են բոլորին, ովքեր ճամփից հետ են դառնում։ Այս երկու օրվա մեջ ավելացել է յոթ

հազար բերան։ Իսկ մենք միայն մեկ ամսվա ուտելիք ունենք։ Թուրքերը փորձում են սովամահ անել մեզ։ Այժմ մենք անհրաժեշտաբար պետք է նորմավորենք սնունդը ծայր աստիճան։ Բայց միաժամանակ պետք է պարեն որոնենք» (ՎԳ, 462)։

Հայերի կազմակերպված դիմադրությունը կատաղեցնում է թուրքերին։ Թուրքի բնավորության եւս մի գիծ բացահայտվում է հետեւյալ դրվագում. «Հեռվում՝ հայկական արեւելյան դիրքերում, նվագում էր երաժշտախումբը։ Դրանից առաջացած թուրքերի կատաղությունն արտահայտվում էր մոլեգին հրետակոծությամբ։ Զէ՞ որ նրանք զինվորական նվագախումբ չունեին... *(ընդգծումը մերն է – Լ. Ս.) (ՎԳ, 463)։*

Թուրքի ստորությունն ու սրբապղծությունը սահման չեն ճանաչում։ Քաջ գիտակցելով, որ հայերը չեն պայթեցնի իրենց եկեղեցին՝ թուրքերը հենց այդտեղ էլ դիրքավորվում են։ Ու ոստիկանատունը պայթեցնելու ուղարկված Տիգրանը՝ Հարությունի եղբայրը, խոստովանում է.

– Սրտի կսկիծով եմ ծուխ դարձնում մեր քրտինքի ու չարչարանքների արգասիքը, այնպես որ եկեղեցու վրա ձեռքս չգնաց։ Արդեն մի երեքը վառել են թուրքերը... (ՎԳ, 492)։

Գազազելով հայերի դիմադրությունից՝ թուրքերն արդեն ռմբակոծում են գերմանական ու ամերիկյան միսիաները՝ սպանելով այնտեղ ապաստանած կանանց ու երեխաներին։

Թուրքերից ամենեւին պակաս չեն նաեւ ռուսական զորքի հետ Վան եկած թաթարները։ Ռուսական բանակի թաթար գեներալը, մտնելով Վան, հրամայում է զորքին տեղավորել հայերի այգիներում (եւ ոչ թուրքերի լքածներում), ինչը հանգեցնում է այգիների ավերմանը եւ բնակիչներին սննդի աղբյուրից զրկելուն։ Այդ առիթով Մեծ մամն ասում է.

– Թուրքերը մեզ համարում էին անհավատ շներ ու թողնում էին մեզ մեր բների մեջ։ Ռուսները «սիրում են» մեզ, եւ ահա մտել են մեր ունեցվածքի սիրտը, մեր ընտանիքների մեջ, ի կործանումն մեզ (ՎԳ, 553)։

Ռուսների հանդեպ կորսված հավատն իրեն զգացնել է տալիս արդեն հարկադիր գաղթի ճամփան բռնած վանեցիներին։ Երբ Սիրարփին՝ Վահրամի զարմուհին, հիշեցնում է, որ գնում են առանց վերադարձի հույսի, իսկ Վահրամն առարկում է, Սիրարփին պնդում է.

– Բայց չէ՞ որ դու լսեցիր, թե ցարը ուզում է Հայաստանը առանց հայի։ Նա էլ ստիպում է մեզ փախչել։ Գուցեեւ ճանապարհին մեզ մատնի թուրքերին։ Այլապես ինչո՞ւ ռուսական զորքերը պիտի քաշվեին մեզնից առաջ

ու զինաթափեին մեզ, ինչո՞ւ պիտի բռնագրավեին ձիերը, ինչո՞ւ պիտի Վանից հեռացնեին ռուսական բանակի հայկական ջոկատները (ՎԳ, 575)։

Ինչպես տեսնում ենք, զգաստությունն ու խորաթափանցությունը չեն կորցնում դարձյալ կանայք, այս պարագայում՝ մանկահասակ աղջիկը՝ Մեծ մամի իմաստության ժառանգորդուհիներից մեկն է։

Թուրքի դիմագծի վերջին վրձնահարվածը տրվում է արդեն գաղթի ճանապարհներին. արեւից ու ծարավից տանջահար Վահրամը հորեղբորը՝ Տիգրանին հարցնում է, թե ինչու երբեք ծառի չեն հանդիպում եւ լսում.

– Իսկ դու ամբողջ ճանապարհի երկայնքին ավերված գյուղեր չտեսա՞ր...

– Ոչ. ոչինչ չեմ նկատել։

– Որովհետեւ ձյունը, սառն ու տաքը լվացել-մաշել են այդ ավերակները... Բանն այն է, Վահրամ, որ մի ժամանակ այս ճանապարհն անցնում էր կանաչ դաշտերի ու այգիների միջով. նրա եզրերից ջրեր էին հոսում, եւ ծառերն էլ հովանի էին կազմում։ Սակայն գյուղերը հրկիզելուց ու բնակիչներին էլ սրախողխող անելուց հետո էլ ոչ ոք չի զբաղվել ոռոգումը վերականգնելով։ Եւ այդ ժամանակ Մոնղոլիայի անապատները, որ լքել էին թուրքերը, նրանց ձեռքով էլ վերստեղծվեցին Հայաստանում (ՎԳ, 582)։

Մի վերջին դրվագով կրկին հայտնվում են ռուսները. «Հանկարծ բազմությունը սեղմվեց ճանապարհի եզրերին, որոտի դղրդոց առաջացնելով, ռուսական բանակի մի հսկայական զորամաս անցավ նրանցից առաջ։ Թնդանոթների արծաթագույն փայլփլումները, ձիերի բաշերն ու երկար պոչերը ֆանտաստիկ տեսք էին տալիս գումակին։

Փակ՝ ծածկով եւ սովորական սայլակների, անգամ արկերի սայլերի մեջ բազմաթիվ դատարկ տեղեր կային։ Գաղթականները նախանձով էին նայում դրանց։ Արտասվաթոր մայրերն իրենց երեխաներին պարզեցին դեպի կազակները՝ ուժեղի օգնությունը հայցելով թույլի համար։ Ծերունիներն ու երեխաներն էլ իրենց աղաչանքն աղաղակեցին, սակայն զորամասն անցավ՝ տանելով այն հույսը, որ մի պահ բորբոքել էր այդ քարացած սրտերը։ Գթասրտությամբ համակված զինվորներ ու սպաներ զանազան շարժումներով արտահայտեցին իրենց կարեկցանքը, ափսոսանքն ու ոչինչ անել չկարողանալու ամոթը, շարունակ կրկնելով՝ արգելված է՝ ընկճված շեշտով եւ ներում ստանալու համար հաց, շաքար, կոնֆետ կամ պահածոյի տուփեր նետելով (ՎԳ, 586–587)։

Շոգից, ծարավից ու քաղցից տանջահար ժողովրդի տառապանքները բազմապատկում էին թուրք-քրդական զինված հեծյալները, որոնք

հարձակվում, կոտորում էին գաղթականներին եւ ավարի առնում նրանց չնչին ինչքը։

Գաղթական դարձած արմենական ղեկավարներն առաջարկում են Դումայի հայ դեպուտատների միջոցով հասնել քրդերի զինաթափմանը եւ թշնամի ճանաչելուն։

Անհրաժեշտ է, որ նրանք հասկացնեն ում որ պետք է, որ քրդերը թուրքերից պակաս վտանգավոր չեն։ Թուրքի ձեռքը ոչինչ չէր կարող անել՝ առանց քրդին գործիք դարձնելու (ՎԳ, 648)։

Գաղթի ճանապարհին մեծ կորուստներ կրելով՝ վանեցիների ծվենները հաստատվում են Արեւելյան Հայաստանում։ Վահրամին հայրը մի կերպ հասցնում է Թիֆլիս եւ կրթության տալիս Ներսիսյան դպրոցում։

Երբ Վահրամն ուզում է թողնել դպրոցում իր ուսումն ու հորեղբայր Տիգրանի պես կամավորագրվել ռուսական բանակին՝ Արեւմտյան Հայաստանն ազատագրելու, հայրն ասում է.

– Ընդհակառակը, որդյա՛կ, դու ես մեր գերդաստանի հույսը։ Դու պետք է նվիրվես ուսմանը եւ ուսանես, որովհետեւ իմացությունն ու իմաստությունը ուժ են տալիս մարդուն։ Դու ինքդ, մեր տաքարյուն երիտասարդությունն է, որ պիտի կարողանա հաստատել արդարության իշխանությունը։

– Բայց, հայրիկ, ես չեմ ուզում սովորել այն անպետք բաները, որ ուսուցանում են մեզ։

– Օ՜, եթե մեր սերունդը կարողանար հիմնավոր գիտելիքներ ձեռք բերել, գուցեեւ մենք զինված լինեինք հաղթանակի համար (ՎԳ, 662)։

Այս վերջին դրվագը գալիս է իր կնիքը դնելու եւ վավերացնելու, թե ինչքան արդիական է Վ. Գարդոնի այս հոյակապ գործը, որը ընթերցելն ու վերընթերցելը յուրաքանչյուր հայի համար պարտադիր պիտի դառնա՝ երբեք չկորցնելու համար զգոնությունը, թշնամուն քաջ ճանաչելու, գիտելիքով զինված ու դիմադրելու պատրաստ լինելու համար։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վիկտոր Գարդոն, «Զմրուխտավառ ասպետը», Վանի ինքնապաշտպանություն, Վանի անկումը, երիտթուրքեր, թուրքական դիվանագիտություն, գաղթ, Ներսիսյան դպրոց։

РЕЗЮМЕ

Данная статья является продолжением статьи «Образ турка в романе Виктора Гардона «Изумрудный рыцарь»», целью которой является обобщение восприятия Гардоном образа турка, самообороны и падения Вана.

В статье описываются особенности турецкой дипломатии, черты характера турок, их подлость и бесчеловечность.

В противовес этому очерчены достоинства коренных армян Вана, их верность, традиции, самоотверженная борьба за сохранение своей идентичности и защиту своих сородичей.

Особого внимания заслуживает отношение армян к образованию и его оценке, проявление заботы в воспитании детей даже в самой сложной и безнадежной ситуации.

SUMMARY

This article is a continuation of the article “The Turk’s Character in Victor Gardon’s novel “The Emerald Knight””, which aims to summarize Gardon’s perception of the image of the Turk, self-defense, and the fall of Van.

The article describes the features of Turkish diplomacy, the character traits of the Turks, their meanness and inhumanity.

In contrast, the virtues of the indigenous Armenians of Van are outlined, including their loyalty, traditions, and selfless struggle to preserve their identity and protect their relatives.

Particular attention should be paid to the Armenians’ attitude toward education and its value, as well as their concern for raising children even in the most difficult and hopeless situations.